Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Վանաձորի Ղ.Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ), դասվարի (17 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (6 դասաժամ), ռուսաց լեզվի (10 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 3-ից մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Դասվարների մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 18-ին՝ ժամը 13:00-ին և 2025թ. սեպտեմբերի 18-ին՝ ժամը 15:00-ին** Վանաձորի Ղ.Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոցում, հասցե՝ Տարոն-4 թաղամաս, Զեյթունի փողոց թիվ ¾ դպրոց:

<<Հայոց լեզու և գրականություն>>, <<Ռուսաց լեզու>> առարկաների ուսուցչի մրցույթը տեղի կունենա **2025թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 13:00-ին՝ <<Ռուսաց լեզու>> և 2025թ. սեպտեմբերի 19-ին՝ ժամը 15:00-ին՝<<Հայոց լեզու և գրականություն>>** Վանաձորի Ղ.Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոցում, հասցե՝ Տարոն-4 թաղամաս, Զեյթունի փողոց թիվ ¾ դպրոց

Տեղեկությունների համար զանգահարել (0322) 6-01-79 հեռախոսահամարով: